ԾՐԱԳԻՐ

ԸՄՈՒՍՆՈՒԹԵԱՆ ԵՒ ՀԸՐՄԱՆԻՔԻ ՍՈՎՈՐՈՒԹԵՐԻ ՄԸՍԻՆ ՆԻՒԹԵՐ ՀԱՒԱՔԵԼՈՒ [1].

1. Արդեօք կա՞ն աւանդութիւններ նախնի Հայերի խառնակեցութեան, բազմայրութեան եւ բազմակնութեան, ինչպէս նաեւ մայրական տիրապետութեան մասին:

2. Արդեօք տղաքերքի ծէսերի մէջ չկա՞ն այնպիսի մնացորդներ, որ ակնարկէին հայրական տիրապետութիւնը մայրականի վրայ: (Այսպէս օր. Չինաստանում՝ երեխան ծնուելիս հայրն է պարկում՝ տղոցկնի տեղը եւ ձեւացնում՝, իբր թէ ինքն է ծնել երեխան):

3. Արդեօք աւանդութիւններ չկա՞ն, որ նախնի Հայ աղջիկներն զոհել են իրենց կուսութիւնն Անահտին՝ նրա տաճարում:

4. Արդեօք աւանդութիւններ կա՞ն սիրոյ աստծու, Աստղիկի մասին: Այժմ՝ սիրահարուած երիտասարդներն ու աղջիկները ո՞ր սրբին են աղօթում՝ եւ ո՞րի միջնորդութիւնը հայցում՝. օր. Ս. Սարգսին:

5. Աւանդութիւններ չկա՞ն թէ նախնի Հայերը համընտանի եւ կամ օտարացեղ ամուսնութիւն են ունեցել:

6. Գոյութիւն ունի՞ արդեօք թոնրի պսակը (օր. Ղա-

---

[1]) Ձեռնարկելով գրել «Ամուսնութեան զարգացումն Հայոց մէջ», խնդրում եմ ուղարկել ինձ հարսանիքի նկարագրութիւններ այս ծրագրի համեմատ։ Պարզ է, որ նիւթերը ուղարկողի անունը կը յիշուի պատշաճաւոր տեղում և նրան կուղարկուի գոնէ մի օրինակ այդ աշխատութիւնից։ Հարցէս՝ Ե. Լալայեան. Տպագ. Ե. Լ.

բաբաղում:) Ի՞նչ աւանդութիւններ կան այս մասին. ժողովուրդն ի՞նչ հայեացք ունի այս պատկի մասին:

7. Արդեօք հարսանիքից յետոյ փեսան ու՝ հարսն օրհնել տալի՞ս են փեսի ծնողների զերեզմանները:

8. Գոյութիւն ունի՞ արդեօք առեւանգմամբ ամուսնութիւնը. ի՞նչ է դրա պատճառը. ժողովուրդն ի՞նչպէս է վերաբերւում դրան:

9. Արդեօք կա՞յ գնամամբ ամուսնութիւն: Ի՞նչպէս է կոչւում եւ ո՞րքան է լինում այն գումարը, որ տրւում է փեսացուի կողմից հարսնցուի ծնողներին: Ի՞նչ ծէսեր, սովորոյթներ եւ բարեմաղթութիւններ ակնարկում են հարսը ծախելու սովորութիւնը:

10. Ծառայո՞ւմ են արդեօք մինին, նրա աղջկայ հետ ամուսնանալու պայմանով: Չի՞ պատահում, որ փող վճարելու փոխարէն մի որ եւ է ծառայութիւն կատարէին:

11. Կա՞յ արդեօք օրօրոցի նշանաղրութիւն. ի՞նչ է պատճառը եւ ընդհանրապէս ի՞նչ հետեւանք է ունենում:

12. Զարգացա՞ծ է արդեօք տղամարդի մէջ սիրոյ զգացմունքը դէպի կինը: Ո՞ր հասակում են ամուսնանում, ի՞նչ է կնոջ վիճակն ամուսնութիւնից առաջ եւ յետոյ: Արդեօք կինն ունի՞ առանձին սեպհականութիւն եւ ո՞ւմ է մնում այն՝ նրա մահից յետոյ:

13. Ի՞նչպէս է այրի կանանց դրութիւնը: Ո՞ւմն է պատկանում մեռը (փեսի տուած դրամը): Ի՞նչ պայմաններով է նա թողնում իւր կերսանց տունը: Ո՞ւմն են պատկանում երեխաները: Կա՞ն աւանդութիւններ, որ ննջեցեալի եղբայրը կամ նոյն գերդաստանից մինն ամուսնանար այրիի հետ (levirat). Սովորաբար տալի՞ս են անդրանիկ որդուն նախկին ամուսնու անունը: Պատահո՞ւմ են դէպքեր կամ կա՞ն աւանդութիւններ, որ ամուսինը մեռնելիս կտակէր կամ զոնէ ցանկութիւն յայտնէր, որ կինն այսինչի հետ ամուսնանար կամ այրի մնար:

14. Տարուայ ո՞ր ժամանակն են ամենից աւելի հարսանիք անում: Շաբաթուայ ո՞ր օրն աւելի զերաղաս են հա-

մարում հարսանիքի գլխատը հանդէսների կատարման համար: Քանի՞ օր է տեւում հարսանիքի հանդէսը եւ մանաւանդ ո՞րքան է լինում հարսի եւ փեսի կողմից արած ծախքը:

15. Ինչ ընծաներ են ստանում բոլոր ազգականները եւ հարսանիքին մասնակցող միւս անձերը: Ինչ գումարով է անում աղջկայ օժիտը եւ ինչից է բաղկանում:

16. Ինչ ընծաներ են ուղղում փեսան եւ նրա ազգականները հարսին, հարսանիքից առաջ, հարսանիքի օրը եւ յետոյ: Ինչ ընծաներ է ստանում փեսան:

17. Ո՞րպիսի գլխատը բաժանումներ ու հանդէսներ ունի հարսանիքը եւ ինչպէս են կոչում:

18. Մանրամասն նկարագրելու է հարսանիքի պատրաստութիւնը, որի մէջ յիշելու է նաեւ զանազան խմորեղէնների, բաղցրաւենիների ու կերակրների, ինչպէս եւ հարսանեաց պսակի կամ հանդիսաւոր ծառի պատրաստութիւնը: Ո՞րոնց ձեռքով, ինչպէս եւ ե՞րբ են պատրաստում այս բոլորը:

19. Պէտք է մանրամասնօրէն նկարագրել այս բոլոր հանդէսները, ինչպէս եւ նշանադրութիւնից մինչեւ հարսանիքը փեսի տնից հարսին ուղարկուած «փայերն» ու նրանց «դարձուածքները»:

20. Մանրամասն եւ կարգով նկարագրելու է հարսանիքի ընթացքը, որի մէջ, պատշաճատը տեղերում, յիշելու է գործածելի երգերը, գովքը, ասացուածները, կարելոյն չափ պահպանելով տեղային բարբառի բոլոր նրբութիւնները: Գրելու է՝ եթէ հնարատը է, եւ հարսանիքի երգերի եւ պարերի եղանակները՝ (երաժշտական խազերով), զոնէ նրանցից գլխատները, որոշելով թէ ո՞րոնք են նրանցից տեղային, հնագոյնները, որոնք նոր են եւ ուրիշ տեղից առած եւ յատկապէս ո՞ր տեղից:

21. Ո՞րոնք են կազմում հարսի եւ փեսի (թագաւորի) անձնապահ խումբը (օր. ծաղկոցատրները, թագաւորցուները, հարսնեղբայր եւ այլն): Բազմաթի՞ւ է լինում այդ խումբը

եւ սովորաբար ինչո՞վ է լինում զինուորուած: Ի՞նչ յարաբերութիւնները են սկսում յետոյ՝ հարսանիքին մասնակցողների մէջ:

22. Ի՞նչ է քատրի պաշտօնը հարսանիքի մէջ: Արդեօք նա կապո՞ւմ է հարսանիքին սուր, ինչո՞ւ եւ ի՞նչ դէպքերում է գործ ածում: Ի՞նչ է հարսնեղբօր եւ փեսեղբօր պաշտօնը:

23. Ինչո՞վ է տարբերւում որբի, ապօրէն զաւակի հարսանիքը սովորականից: Ինչո՞վ է տարբերւում այրի մարդու կամ այրի կնոջ հարսանիքը:

24. Ի՞նչ նշաններով են զուշակում ամուսնական կեանքին բաղդատը կամ դժբաղդ վիճակ: Որպիսի՞ միջոցների ու մնապաշտ ծէսերի են դիմում վատ հետեւանքներից (չար աչք, թլիսմ) ազատուելու համար: Ո՞րպիսի մնապաշտ ծէսեր են կատարում հարսին փեսի տունը տանելիս: Ի՞նչ նշաններով են զուշակում ամուսինների ապագայ սերնդի մասին:

25. Ո՞րտեղ եւ ի՞նչպէս են պատրաստում հարսանեկան անկողինը՝ առագաստը: Արդեօք պահանջո՞ւմ են հարսի կուսութեան ապացոյց: Ի՞նչ փոփոխութիւններ են առաջանում հարսանեկան ծէսերի մէջ, երբ իմանում են, թէ հարսը կոյս չէ:

26. Արդեօք ժողովրդի մէջ կա՞յ որ եւ է կախարդութիւն (թլիսմ) ապակաղ անձի երեխայ առաջացնելու նպատակով: Ի՞նչ միջոցներ են գործ դնում յղութեան առաջն առնելու եւ պտղոյն խանգարելու համար:

Հրատարակիչ՝ Երուանդ Լալայեանց.